Ձեր Սոցիալական Ապահովության Համարն Ու Քարտը

Բովանդակություն

Ինչպե՞ս կարող եմ ստանալ համար և քարտ:	2
Որքա՞ն դա արժե:	3
Արդյո՞ք սոցիալական ապահովության տարբեր տեսակի քարտեր կա՞ն:	3
Ինչպե՞ս կարող եմ ստանալ երեխայիս սոցիալական ապահովության համարը:	4
Ի՞նչ անել, եթե անունս կամ ազգանունս փոխվի:	4
Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ Սոցիալական ապահովության տվյալներն իմ մասին ճշգրիտ են:	5
Ի՞նչ անել, եթե ներգաղթի կամ քաղաքացիության իմ կարգավիճակը փոխվել է:	6
Ի՞նչ անել քարտը կորցնելու կամ գողացվելու դեպքում:	6
Ինչպե՞ս կարող եմ պաշտպանել սոցիալական ապահովության իմ համարը:	6
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	7

Սոցիալական ապահովության համարը մեծ նշանակություն ունի, քանի որ անհրաժեշտ է աշխատանքի ընդունվելու, սոցիալական ապահովության նպաստ ստանալու և որոշակի պետական ծառայություններից օգտվելու համար: Սոցիալական ապահովության համարը պահանջում են նաև բազմաթիվ այլ հաստատություններ, օրինակ՝ բանկերը և վարկային կազմակերպությունները:

Եթե ԱՄՆ-ում եք բնակվում, սակայն այդ երկրի քաղաքացի չեք, ձեզ նույնպես կարող է հարկավոր լինել սոցիալական ապահովության համար: Մանրամասն այդ մասին տե՛ս Սոցիալական ապահովության համարներ՝ ոչ-քաղաքացիների համար հրապարակումը (Հրատարակություն հ. 05-10096-AM): Ժամանակավոր բնակության և աշխատանքի թույլտվություն ունենալու դեպքում կարդացեք Օտարերկրյա աշխատողներ և սոցիալական ապահովության համարներ հրապարակումը (Հրատարակություն հ. 05-10107-AM):

Ինչպե՞ս կարող եմ ստանալ համար և քարտ:

Սոցիալական ապահովության համարի և քարտի համար.

- Լրացրեք լրացնել SS-5, *Սոցիալական ապահովության քարտի դիմում* (Ձեւաթուղթ SS-5-INST-AM)
- Ներկայացրեք մեզ հետևյալ փաստաթղթերի բնօրինակները կամ տրամադրող մարմնի կողմից հաստատված պատճենները: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի լուսապատճեններ, այդ թվում՝ նոտարի կողմից վավերացված: Բոլոր փաստաթղթերը պետք է վավեր լինեն (ոչ ժամկետանց) և ապացուցեն ձեր՝
  - — ԱՄՆ-ի քաղաքացիության կամ ներգաղթի կարգավիճակը ներառյալ Ներքին անվտանգության նախարարության (DHS) կողմից տրված աշխատանքի թույլտվությունը,
  - — տարիքը և
  - — ինքնությունը:

Սոցիալական *Սոցիալական ապահովության քարտի դիմում* (ձև SS-5) բոլոր փաստաթղթերի հետ միասին կարող եք ուղարկել փոստով կամ լրացնել դիմումը էլեկտրոնային եղանակով և ուղարկել փաստաթղթերը *Սոցիալական ապահովության տեղական գրասենյակ:*

Տասներկու տարեկանը լրացած և ավելի բարձր տարիքի անձինք, որոնք դիմել են սոցիալական ապահովության քարտ ստանալու համար, պետք է հարցազրույց անցնեն, նույնիսկ եթե դիմումը նրանց փոխարեն ստորագրում է ծնողը կամ խնամակալը:

Քաղաքացիություն և ներգաղթի կարգավիճակ. Որպես ԱՄՆ քաղաքացիության ապացույց մենք կարող ենք միայն որոշակի փաստաթղթեր ընդունել: Դրանք են ԱՄՆ-ի ծննդյան վկայականը, ԱՄՆ-ի անձնագիրը, հպատակագրման վկայականը կամ քաղաքացիության վկայականը: Եթե ԱՄՆ-ի քաղաքացի չեք, Սոցիալական ապահովությունը կխնդրի ներկայացնել ԱՄՆ-ի ներգաղթի ընթացիկ փաստաթղթերը: Ընդունելի փաստաթղթերն են.

- Form I-551, *Permanent Resident Card* (Մշտական բնակության քարտ, «գրին քարդ», ներառում է ներգաղթողի մեքենաընթեռնելի վիզա ձեր ժամկետը չլրացած արտասահմանյան անձնագրի հետ),
- I-94 *Arrival/Departure Record* (Մեկնման/ժամանման արձանագրում ձեր ժամկետը չլրացած արտասահմանյան անձնագրի հետ) կամ
- I-766, *Employment Authorization Card* (Աշխատանքի տեղավորման թույլտվության քարտ, EAD, աշխատանքի թույլտվություն):

Միջազգային ուսանողները պետք է հավելյալ փաստաթղթեր ներկայացնեն: Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք *Միջազգային ուսանողներ և սոցիալական ապահովության համարներ* հրապարակումը (Հրատարակություն հ. 05-10181-AM):

Տարիք. Եթե ԱՄՆ-ում եք ծնվել, ապա պետք է ներկայացնեք ԱՄՆ-ի ձեր ծննդյան վկայականը: (Դրա առկայության դեպքում պարտավոր եք ներկայացնել այն): Եթե ծննդյան վկայական չունեք, մենք կարող են ընդունել.

- Մինչև 5 տարեկանը տրված՝ եկեղեցու վկայական, որում նշված է ձեր ծննդյան տարեթիվը,
- Ձեր ծնունդը փաստող ԱՄՆ-ի բժշկական քարտ կամ
- Անձնագիր:

Եթե արտասահմանում եք ծնվել, ապա պետք է ներկայացնեք ծննդյան արտասահմանյան վկայականը (եթե ունեք այն, այլապես 10 աշխատանքային օրվա ընթացքում կարող եք ստանալ դրա պատճեն): Եթե չեք կարող ստանալ այդ փաստաթուղթը, մենք կխնդրենք ձեզ ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

(շրջել)

- Արտասահմանյան անձնագիրը,
- I-551, Մշտական բնակության քարտը կամ
- I-94, Մեկնման/ժամանման արձանագրումը:

Անձի հաստատում. Մենք կարող ենք ընդունել միայն ձեր անձը հաստատող որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթղթերը պետք է ժամկետանց չլինեն, պարունակեն ձեր անուն ազգանունը, նույնականացնող տեղեկություններ և ցանկալի է՝ վերջերս արված ձեր լուսանկարը: Սոցիալական ապահովությունը կարող է պահանջել ներկայացնել ԱՄՆ-ի ձեր վարորդական վկայականը, նահանգի կողմից տրված նույնականացման քարտը կամ ԱՄՆ-ի անձնագիրը, որպես ձեր անձը հաստատող փաստաթուղթ: Եթե չունեք նշված փաստաթղթերը, մենք կարող ենք խնդրել ձեզ ներկայացնել հետևյալը.

- աշխատողի նույնականացման քարտ,
- դպրոցականի կամ ուսանողի նույնականացման քարտ,
- առողջության ապահովագրության քարտ (սակայն ոչ «Մեդիքեյր» քարտը),
- ԱՄՆ զինվորի նույնականացման քարտ,
- որդեգրման որոշում,
- կյանքի ապահովագրության վկայագիր կամ
- ամուսնության վկայական (միայն անունը/ազգանունը փոխելու դեպքում):

Բոլոր փաստաթղթերը պետք է բնօրինակ լինեն, կամ ներկայացվեն տրամադրող մարմնի կողմից հաստատված պատճենները: Մենք չենք կարող ընդունել փաստաթղթերի լուսապատճեններ, այդ թվում՝ նոտարի կողմից վավերացված: Մենք կարող ենք օգտագործել մեկ փաստաթուղթը երկու նպատակով: Օրինակ՝ ԱՄՆ-ի անձնագիրը քաղաքացիության և անձը հաստատող ապացույց է: Կամ ձեր ԱՄՆ-ի ծննդյան վկայականը կարող է հանդիսանալ որպես ձեր տարիքի և քաղաքացիության ապացույց: ***Այնուամենայնիվ, դուք պետք է առնվազն երկու առանձին փաստաթուղթ ներկայացնեք:***

Բոլոր անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց և փաստաթղթերը տրամադրող մարմինների միջոցով ստուգելուց հետո մենք փոստով կուղարկենք ձեզ սոցիալական ապահովության համարով քարտը:

Որքա՞ն դա արժե:

Սոցիալական ապահովության համարը և քարտը ոչ մի վճարում չեն պահանջում: Եթե որևէ մեկը փորձի գումար գանձել համարի կամ քարտի համար, ապա խնդրում ենք հիշել, որ Սոցիալական ապահովության ծառայություններն անվճար են: Դուք կարող եք հաղորդել վճարի գանձնման փորձի մասին՝ զանգահարելով Գլխավոր տեսուչի բաժին **1-800-269-0271** հեռախոսահամարով:

Արդյո՞ք սոցիալական ապահովության տարբեր տեսակի քարտեր կա՞ն:

Մենք սոցիալական ապահովության երեք տեսակի քարտեր ենք թողարկում: Բոլոր քարտերում նշվում է ձեր անունը և սոցիալական ապահովության համարը:

- Առաջին տեսակի քարտը պարունակում է ձեր անուն ազգանունը, սոցիալական ապահովության համարը և թույլ է տալիս աշխատանքի ընդունվել՝ առանց որևէ սահմանափակումների: Նման քարտերը մենք տրամադրում ենք.
  - — ԱՄՆ-ի քաղաքացիներին և
  - — Մարդկանց, ովքեր օրինական եղանակով ԱՄՆ-ի մշտական բնակության թույլտվություն են ստացել:
- Երկրորդ տեսակի քարտերում նշվում է ձեր անուն ազգանունը, սոցիալական ապահովության համարը և «VALID FOR WORK ONLY WITH DHS AUTHORIZATION (վավեր է աշխատանքի ընդունվելու համար՝ միայն DHS-ի թույլտվության առկայության դեպքում)» գրառումը: Այս

(շրջել)

տեսակի քարտերը մենք տրամադրում ենք այն անձանց, ովքեր օրինապես իրավունք ունեն ժամանակավոր բնակվելու ԱՄՆ-ում և ստացել են Ներքին անվտանգության նախարարության (DHS) աշխատանքի ընդունվելու թույլտվություն:

- Երրորդ տեսակի քարտերում նշվում է ձեր անուն ազգանունը, սոցիալական ապահովության համարը և «VALID FOR WORK ONLY WITH DHS AUTHORIZATION (վավեր է աշխատանքի ընդունվելու համար)» գրառումը: Նման քարտերը մենք տալիս ենք այլ երկրների քաղաքացիներին, որոնք.
  - Օրինական կարգով են գտնվում ԱՄՆ-ում և DHS-ի կողմից աշխատանքի թույլտվություն չունեն, սակայն հիմնավոր պատճառով, որը կապված չէ աշխատանքի տեղավորման հետ, սոցիալական ապահովության համարի կարիք ունեն, կամ
  - Համաձայն դաշնային օրենքի՝ պետք է ունենան սոցիալական ապահովության համար՝ նպաստից և պետական ծառայություններից օգտվելու նպատակով:

Ինչպե՞ս կարող եմ ստանալ երեխայիս սոցիալական ապահովության համարը:

Երեխայի սոցիալական ապահովության համարի դիմումը ցանկալի է ներկայացնել անմիջապես երեխայի ծնվելուց հետո: Դա կարող եք անել միաժամանակ երեխայի ծննդյան վկայականը գրանցելու հետ միասին: Վկայականներ տրամադրող ձեր նահանգի գործակալությունը երեխայի մասին տվյալները մեզ կփոխանցի: Մենք փոստով կուղարկենք սոցիալական ապահովության համարը ձեզ:

Կամ կարող եք սպասել և դիմել Սոցիալական ապահովության գրասենյակ: Այդ դեպքում անհրաժեշտ է ապահովել երեխայի տարիքը, անձը հաստատող և ԱՄՆ-ի քաղաքացիության կարգավիճակի մասին փաստաթղթեր, այդ թվում՝ երեխայի հետ կապը հաստատող կամ երեխայի նկատմամբ պատասխանատվության մասին վկայող ապացույց: Դուք նաև պետք է ներկայացնեք ձեր անձը հաստատող փաստաթուղթը: Մենք պետք է ստուգենք երեխայի ծնվելու մասին արձանագրման իսկությունը, ինչը կարող է մինչև 12 շաբաթ ժամանակ պահանջել՝ սոցիալական ապահովության համարի և քարտի գրանցման և տրամադրման հետ մեկտեղ: Արձանագրման իսկությունը հաստատելու համար մենք հարցում ենք անում փաստաթուղթը տրամադրող կազմակերպությանը:

Որդեգրած երեխաներ. Երեխային կարող է տրվել սոցիալական ապահովության համար՝ նախքան որդեգրման գործընթացի ավարտը, սակայն որոշ դեպքերում շտապել պետք չէ: Սպասելով՝ դուք կարող եք օգտագործել երեխայի նոր անունը: Եթե մինչև գործընթացի ավարտը հարկային հայտարարագրում անհրաժեշտ է նշել երեխային որպես կախյալ անձ, դիմեք Դաշնային հարկային ծառայություն հետևյալ ձևանմուշի համար՝ *Form W-7A*, *Application for Taxpayer Identification Number for Pending U.S. Adoptions* (ԱՄՆ-ում որդեգրման չավարտված գործընթացի հետ կապված հարկատուի համարի ստացման դիմում): Լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք *Սոցիալական Ապահովության Համարներ Երեխաների Համար* հրապարակումը (Հրատարակություն հ. 05-10023-AM).

Ի՞նչ անել, եթե անունս կամ ազգանունս փոխվի:

Եթե օրինական ձևով փոխել եք ձեր անունը կամ ազգանունը՝ ամուսնության, ամուսնալուծության, դատարանի որոշմամբ կամ այլ պատճառներով, դուք պետք է հայտնեք այդ մասին Սոցիալական ապահովությանը՝ նոր քարտ ստանալու համար: Եթե աշխատում եք, տեղեկացրեք այդ մասին նաև ձեր գործատուին: Անվան կամ ազգանվան փոփոխության մասին մեզ չհայտնելը կարող է հանգեցնել՝

(շրջել)

- Հարկերի վերադարձի հետաձգմանը և
- Ձեր աշխատավարձի սխալ գրանցմանը Սոցիալական ապահովության գրասենյակում, ինչը կարող է նվազեցնել սոցիալական ապահովության ապագա նպաստի չափը:

Սոցիալական ապահովության քարտի վրա ձեր ազգանունը կամ անունը փոխելու համար անհրաժեշտ է ներկայացնել ազգանվան կամ անվան օրինական փոփոխման փաստաթղթի բնօրինակը: Որպես նման փոփոխության ապացույց Սոցիալական ապահովումը կարող է ընդունել՝

- ամուսնության վկայականը,
- ամուսնալուծության վկայականը,
- հպատակագրման վկայականը, որտեղ նշված է նոր անուն ազգանունը կամ
- դատարանի որոշումը անվան փոփոխության մասին:

Եթե անվան կամ ազգանվան օրինական փոփոխման մասին փաստաթուղթը բավարար տեղեկություններ չեն պարունակում ձեր անձը նույնականացնելու համար, և եթե ավելի քան երկու տարի առաջ եք փոփոխել ձեր անունը/ազգանունը (կամ չորս տարի առաջ, եթե 18 տարեկանից փոքր եք եղել), ապա պետք է ներկայացնեք անձը հաստատող փաստաթուղթ, որտեղ նշված է ձեր հին անունը/ազգանունը (համաձայն մեր գրանցումների): Մենք կընդունենք հին անունով/ազգանունով տրված փաստաթուղթը, նույնիսկ եթե դրա ժամկետը լրացել է:

Եթե չունեք հին անունով/ազգանունով անձը հաստատող փաստաթուղթ, ապա մենք կարող ենք ընդունել ժամկետը չլրացած ձեզ նույնականացնող փաստաթուղթը, որը նոր անունով/ազգանունով է տրված, եթե կարողանանք նույնականացնել ձեր անձը մեր գրանցումներում:

Ձեր նոր քարտը կունենա նույն համարը, ինչպես և նախորդը, սակայն նոր քարտում կնշվի ձեր նոր անունը/ազգանունը:

Ինչպե՞ս կարող եմ համոզվել, որ Սոցիալական ապահովության տվյալներն իմ մասին ճշգրիտ են:

Յուրաքանչյուր տարի ձեր գործատուն ուղարկում է Սոցիալական ապահովությանը ձև W-2-ի (*Wage and Tax Statement*՝ Եկամուտի և հարկերի հաշվետվության) պատճենը: Մենք համեմատում ենք ձեր անունը, ազգանունը և սոցիալական ապահովության համարը ձև W-2-ում նշված ձեր տվյալների հետ: Ձև W-2-ում նշված ձեր աշխատավարձն ավելացվում է Սոցիալական ապահովության ձեր աշխատանքային եկամուտների պատմությանը:

Կարևոր է, որ սոցիալական ապահովության քարտի վրա նշված անունն ու համարը համապատասխանեն ձեր գործատուի կողմից ներկայացվող աշխատավարձի հաշվարկային ցուցակում և W-2-ձևում նշված տվյալներին: Դուք ինքներդ պետք է հետևեք, որ Սոցիալական ապահովության գրասենյակում պահվող տեղեկությունները համապատասխանեն ձեր գործատուի տրամադրած տվյալներին: Եթե սոցիալական ապահովության քարտի վրա սխալ տեղեկություններ են նշված, ապա դիմեք Սոցիալական ապահովության գրասենյակ՝ փոփոխություններ կատարելու նպատակով: Ստուգեք W-2 ձևը՝ համոզվելու, որ գործատուի տրամադրած տվյալները համապատասխանում են իրականությանը, իսկ եթե սխալ են, ապա ճշգրիտ տեղեկություններ ներկայացրեք գործատուին:

Դուք նաև կարող ստուգել ձեր եկամուտների հաշվետվությունը *Social Security Statement* փաստաթղթում (Սոցիալական ապահովության անհատական հաշվետվություն): Տասնութը լրացած անձանց համար *Հաշվետվությունը* հասանելի է առցանց տարբերակով: Ձեր *Հաշվետվությունը* տեսնելու համար անցեք ***www.socialsecurity.gov/myaccount*** կամ ստեղծեք ձեր հաշիվը:

(շրջել)

Ի՞նչ անել, եթե ներգաղթի կամ քաղաքացիության իմ կարգավիճակը փոխվել է:

Եթե ներգաղթի ձեր կարգավիճակը փոխվել է կամ ԱՄՆ-ի քաղաքացիություն եք ստացել, ապա անհրաժեշտ է հայտնել այդ մասին Սոցիալական ապահովության գրասենյակ՝ ձեր տվյալները թարմացնելու նպատակով: Ներգաղթի կամ քաղաքացիության կարգավիճակն ուղղելու համար հարկավոր է ներկայացնել նոր կարգավիճակը կամ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր: Մենք ընդունում ենք միայն որոշակի փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր քաղաքացիությունը՝ քարտի տրամադրման կամ փոփոխման ժամանակ: Դրանք են ԱՄՆ-ի անձնագիրը, հպատակագրման վկայականը կամ քաղաքացիության վկայականը: Եթե ԱՄՆ-ի քաղաքացի չեք, Սոցիալական ապահովությունը կխնդրի ձեզ ներկայացնել ձեր ներգաղթի փաստաթղթերը:

Ի՞նչ անել քարտը կորցնելու կամ գողացվելու դեպքում:

Դուք կարող եք անվճար ստանալ ձեր ու ձեր երեխայի քարտի կրկնօրինակը, եթե այն կորցրել եք կամ գողացել են: Սակայն քարտը թույլատրվում է փոխարինել ոչ ավել, քան երեք անգամ մեկ տարվա ընթացքում և 10 անգամ ողջ կյանքի ընթացքում: Անվան/ազգանվան օրինական փոփոխման կամ այլ բացառիկ պատճառներով քարտի փոխարինումը չի սահմանափակվում: Օրինակ՝ ներգաղթի կարգավիճակի հիման վրա քարտի փոխարինումը սահմանափակումներ չունի: Մենք նաև չենք հաշվի փոխարինումը, եթե կարող եք ապացուցել, որ նոր քարտը ձեզ անհրաժեշտ է զգալի ֆինանսական խնդիրներից խուսափելու համար:

Սոցիալական ապահովության քարտի կրկնօրինակը ստանալու համար պետք է.

- Լրացնեք *Սոցիալական ապահովության քարտի դիմում*,
- Ներկայացնեք անձը հաստատող ոչ ժամկետանց փաստաթուղթ, և, ցանկալի է՝ նոր լուսանկարով,
- Ներկայացնեք ԱՄՆ-ի ձեր քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, եթե արտասահմանում եք ծնվել, և ձեր քաղաքացիությունը չի հաստատվել՝ առաջին անգամ սոցիալական քարտ ստանալու ժամանակ, և
- Ներկայացրեք ներգաղթի ձեր կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, եթե ԱՄՆ-ի քաղաքացի չեք:

Եթե ԱՄՆ-ի քաղաքացի եք, ապրում եք ընտրված նահանգներից մեկում կամ Կոլումբիայի շրջանում, ապա կարող եք դիմել քարտի փոխարինման համար *my* Social Security կայքի միջոցով՝ ***www.socialsecurity.gov/myaccount***: Այցելեք ***www.socialsecurity.gov/ssnumber*** էջ՝ մասնակից նահանգների և այլ պահանջների մասին տեղեկանալու համար: Սոցիալական ապահովման քարտի կրկնօրինակը ստանալու համար պետք է ներկայացնեք ձեր անձը հաստատող փաստաթուղթը: Դուք նաև պետք է ներկայացնեք մեզ ձեր տարիքը և ԱՄՆ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթեր, եթե դրանք բացակայում են մեր տվյալների շտեմարանում:

Ձեր փոխարինված քարտը կպարունակի նույն անունը ու համարը, ինչպես և նախորդը:

Ինչպե՞ս կարող եմ պաշտպանել սոցիալական ապահովության իմ համարը:

Սոցիալական ապահովության ձեր համարը պետք է գաղտնի պահեք և չբացահայտեք այն՝ առանց անհրաժեշտության: Ապահով տեղում պահեք սոցիալական ապահովության ձեր քարտը՝ ուրիշ կարևոր փաստաթղթերի հետ միասին: Քարտը ձեզ հետ վերցրեք միայն

(շրջել)

այն դեպքում, եթե պետք է ներկայացնեք այն գործատուին կամ ծառայությունների մատակարարին:

Մենք մի շարք միջոցներ ենք ձեռնարկում՝ ձեր համարի ապօրինի օգտագործումը կանխելու նպատակով: Օրինակ՝ մենք պահանջում և ուշադիր ստուգում ենք մարդկանց նույնականացնող փաստաթղթերը, որոնք դիմում են սոցիալական ապահովության կորած կամ գողացած քարտը փոխարինելու կամ որոնք դիմում եք քարտի տվյալները փոփոխելու նպատակով: Նման ստուգումների պատճառներից մեկն այն է, որ թույլ չտանք որևէ մեկին խարդախ ճանապարհով սոցիալական ապահովության համարը ստանալ և կեղծ ինքնություն հաստատելը: Սոցիալական ապահովության ձեր տվյալները մենք գաղտնի ենք պահում, բացառությամբ այն դեպքերի երբ՝

- Օրենքը պահանջում է նման տեղեկությունների փոխանցումը այլ պետական մարմնի կամ
- Ձեր տեղեկություններն անհրաժեշտ են Սոցիալական ապահովության կամ պետական առողջապահական ու բարեկեցության ծրագրի իրականացման նպատակով:

Դուք պետք է շատ զգոն լինեք համարը և քարտը ուրիշներին տրամադրելու՝ դրանց անօրեն օգտագործումը կանխելու նպատակով: Համարի տրամադրումը կամավոր բնույթ է կրում նույնիսկ, եթե ձեզնից անմիջապես պահանջում են նշել այն: Եթե ձեզ խնդրեն նշել ձեր համարը, դուք պետք է տեղեկանաք՝

- Ինչի համար է անհրաժեշտ ձեր համարը
- Ինչպես կօգտագործվի ձեր համարը
- Ինչ կպատահի, եթե մերժեք
- Որ օրենքներն են պահանջում նշել ձեր համարը:

Այս հարցերին պատասխանները կարող են օգնել ձեզ որոշում կայացնել՝ արդյոք ցանկանում եք նշել սոցիալական ապահովության ձեր համարը, թե ոչ: Որոշումը ձերն է:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար

(շրջել)

- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Social Security Administration
Publication No. 05-05-10002-AM | January 2017
Ձեր Սոցիալական Ապահովության Համարն Ու Քարտը
Your Social Security Number and Card (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: